



## ԴՈՆԱՐԱ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Բժշկագիտության պատմության կուրսի վարող – դասախոս,  
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ

E-mail. [donarakarapetyan.92@gmail.com](mailto:donarakarapetyan.92@gmail.com)

### Կրթություն

1961-1967թթ. Երևանի պետական բժշկանան ինստիտուտ

1972-1976թթ. Մոսկվայի «Բժիշկների կատարելագործման» ինստիտուտի ասպիրանտ

### Գիտական աստիճան

Բժշկական գիտությունների թեկնածու: 1983թ. Մոսկվայի «Համամիութենական բժշկական և բժշկա – տեխնիկական ինֆորմացիայի» ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական թեզ՝ «Սեբաստահայ բժշկական դպրոցը 16-17-րդ դարերում»:

### Աշխատանքային փորձ

1971թ. մինչ այսօր Մաշտոցի անվան Մատենադարանում, ավագ գիտաշխատող:

1982-2007թթ. Երևանի պետական բժշկական համալսարանում՝ «Բժշկագիտության պատմություն» առարկայի դասախոս: 1985թ. Համամիութենական բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի (BAK) կողմից ստացել է դոցենտի կոչում:

1967-1970թթ. Երևանի №5 կլինիկական հիվանդանոցում, որպես բժիշկ:

### Կարդացվող դասընթացներ

Բակալավրիատ՝ Ընդհանուր և հայ միջնադարյան բժշկագիտության պատմություն

### Գիտական հետաքրքրությունների շրջանակ

Միջնադարյան հայ բժշկագիտության տարբեր ժամանակափուլերի բժշկական ձեռագիր մատյանների ուսումնասիրություն և հրատարակում:

## **Հրատարակված գիտական հոդվածները և ձեռնարկները**

Հրատարակել է հոդվածներ հանրապետության տարբեր գիտական պարբերականներում, միջնադարյան հայ բժշկագիտության տարբեր դարաշրջանների և նշանավոր բժշկապետների մասին: (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», «Պատմա-բանասիրական հանդես», «Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդես», «Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում», «Բանբեր Մատենադարանի», «Էջմիածին»):

Հրատարակել է 4 քննական բնագիր, ընդարձակ ուսումնասիրությամբ և ծանոթություններով:

1. Հովասափ Սեբաստացի, «Բժշկական ընտրեալ տարրական մախցի», աշխ. Դ Կարապետյանի, Երևան, 1986:
2. Բունիաթ Սեբաստացի, «Գիրք բժշկութեան», աշխ. Դ. Կարապետյանի, Երևան, 1987:
3. Ասար Սեբաստացի, «Գիրք բժշկական արհեստի», աշխ. Դ. Կարապետյանի, Երևան, 1993:
4. Ամիրդովլաթ Ամասիացի «Ուսումն բժշկութեան», համեմատական տեքստը, ներածական, ծանոթագրությունները՝ Դ. Կարապետյան, Երևան, 2014:
5. Ամիրդովլաթ Ամասիացի, «Ուսումն բժշկութեանն այս», ֆաքսիմիլե և վերծանություն (հոբելյանական հրատարակություն՝ կապված հեղինակային ինքնագիր բժշկարան – օրինակի 550 – ամյակի հետ): Հրատարակչական ընթացքի մեջ է: